**Հաշվետվություն**

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Գայանե Վասիլյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության ամփոփ վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն, 2026 թ. հունիսի 23

4. **Հրավիրող կողմը**

Եվրոպայի Խորհուրդ

5. **Գործուղման նպատակը**

Գործուղման նպատակն էր մասնակցել Եվրոպայի խորհրդի սոցիալական պաշտպանության փոխադարձ տեղեկատվական համակարգերով զբաղվող կոմիտեի (MISSCEO) 27-րդ հանդիպմանը, ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված վերջին բարեփոխումները, մասնակցել անդամ պետությունների փորձի փոխանակմանը, ինչպես նաև համեմատական աղյուսակների և դրանց լրացման մեթոդաբանության կատարելագործման, ինչպես նաև MISSCEO ուղեցույցի (Guideline) վերանայման աշխատանքներին:

6. **Քննարկված թեմաները**

Հանդիպման օրակարգը կցվում է:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումը բացեց MISSCEO համակարգող տիկին Էյլին Մաքին, ով ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց կոմիտեի ընթացիկ գործունեությունը, առաջիկա աշխատանքները և նիստի կազմակերպչական հարցերը, որից հետո հաստատվեց հանդիպման օրակարգը:

MISSOC համակարգող Նիկոլ Ֆոնդևիլը ներկայացրեց MISSOC ցանցում իրականացվող վերջին աշխատանքները, սոցիալական պաշտպանության համակարգերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և համեմատական ներկայացման ուղղությամբ արձանագրված զարգացումները, ինչպես նաև անդրադարձավ MISSOC և MISSCEO համակարգերի միջև համագործակցության հետագա ընդլայնման հնարավորություններին:

MISSCEO փորձագետ տիկին Դանիելա Ուրսեն ներկայացրեց անդամ պետությունների կողմից ներկայացված համեմատական աղյուսակների ընդհանուր

գնահատականը՝ առանձնացնելով առավել հաճախ հանդիպող մեթոդաբանական խնդիրները: Քննարկվեցին տեղեկատվության ներկայացման միասնական մոտեցումների ապահովման, մեթոդաբանական հստակեցումների և անդամ պետությունների միջև տվյալների համադրելիության բարձրացմանն առնչվող հարցեր:

Հանդիպման ընթացքում անդամ պետությունների ներկայացուցիչները ներկայացրին իրենց երկրներում սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարվա հիմնական օրենսդրական և քաղաքական փոփոխությունները: Հայաստանի Հանրապետության անունից ներկայացվեց 2025 թվականի ընթացքում աշխատանքի, սոցիալական պաշտպանության և առողջապահության ոլորտներում իրականացված հիմնական բարեփոխումների ամփոփ տեղեկատվությունը, այդ թվում՝ ընտանիքների սոցիալական աջակցության ծրագրերի ընդլայնման, զբաղվածության պետական քաղաքականության, կենսաթոշակային համակարգի և առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ:

Օրակարգի առանձին թեմատիկ քննարկումների շրջանակներում ներկայացվեցին զեկույցներ Եվրոպայում սոցիալական ապահովության համակարգերի զարգացման արդի միտումների վերաբերյալ: Մասնավորապես անդրադարձ կատարվեց արհեստական բանականության կիրառման հնարավորություններին և դրա ազդեցությանը սոցիալական պաշտպանության համակարգերի վրա, մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին, ինչպես նաև սոցիալական ռիսկերի փոփոխության և դրանց արձագանքման ժամանակակից մոտեցումներին:

Հանդիպման առանցքային թեմաներից էր MISSCEO ուղեցույցի (MISSCEO Guideline) վերանայված նախագծի քննարկումը: Մանրամասն քննարկվեցին համեմատական աղյուսակների կառուցվածքի, տերմինաբանության, բացատրական նշումների և տեղեկատվության ներկայացման միասնական սկզբունքների վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները: Քննարկումների ընթացքում ներկայացրեցի մի շարք մասնագիտական դիտարկումներ և առաջարկություններ, որոնք վերաբերում էին համեմատական աղյուսակների կառուցվածքի, տերմինաբանության և տեղեկատվության ներկայացման մեթոդաբանական մոտեցումների կատարելագործմանը: Մասնավորապես, առաջարկվեց ապահովել MISSCEO «Organisation» բաժնի պարբերական թարմացումը՝ սոցիալական պաշտպանության համակարգերում տեղի ունեցող ինստիտուցիոնալ փոփոխությունների և կառավարման կառուցվածքների վերափոխումների ամբողջական արտացոլումն ապահովելու նպատակով: Ներկայացված առաջարկությունները ընդունվեցին ի գիտություն և կքննարկվեն ուղեցույցի վերջնական խմբագրման ընթացքում:

Հանդիպման ավարտին քարտուղարությունը ներկայացրեց MISSCEO համակարգի 2026 և 2027 թվականների աշխատանքների ժամանակացույցը, առաջիկա հրատարակությունների նախապատրաստման գործընթացը և հետագա համագործակցությանն առնչվող կազմակերպչական հարցերը:

## 8. Արդյունքները և եզրակացությունները

Հանդիպման մասնակցությունը հնարավորություն տվեց ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված վերջին բարեփոխումները, ծանոթանալ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փորձին, ինչպես նաև մասնակցել MISSCEO համակարգի հետագա զարգացմանն ու մեթոդաբանական փաստաթղթերի կատարելագործման վերաբերյալ մասնագիտական քննարկումներին:

Հանդիպման ընթացքում ստացված տեղեկատվությունը, ներկայացված մեթոդաբանական պարզաբանումները կօգտագործվեն Հայաստանի կողմից MISSCEO շրջանակներում հետագա տեղեկատվության պատրաստման, համեմատական աղյուսակների լրացման և հետագա համագործակցության գործընթացներում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Գայանե Վասիլյան

29.06.2026թ.